# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 05/20

ք. Գյումրի «13» փետրվարի 2020թ.

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ք. Աիարոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Համլետ Ավետիսյանը, ի դեմս Հ. Ավետիսյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են _10_ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են _20_ օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 904 930 /ինը հարյուր չորս հազար ինը հարյուր երեսուն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական

միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ___2___ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___2___ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից,*

նդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ | Համլետ Ավետիսյան Ա/Ձ |
| ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2 | ք. Գյումրի Գոգոլի 70 |
| ՀՎՀՀ 05536355 | ՀՎՀՀ 57262622 |
| Հ/Հ 900218000587295 0 | Հ/Հ 220060813718000 |
| Գյումրիի գանձապետական բաժանմունք | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Տնօրեն՝ Բ. Աharոնյան | Տնօրեն՝ Հ. Ավետիսյան |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| համարը | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ամիսներ/ ենթակա քանակը | Ժամկետը |
| Մաքրող և փայլեցնող արտադրանք | | | | | | | | | | |
| 1 | 39831241 | Օճառ 100գ | Ձեռքի օճառ «Սովորական» տեսակի, հակաբակտերիալ ազդեցությամբ: | հատ | 250 | 125000 | 500 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 100<br>III<br>IV 160<br>V<br>VI<br>VII<br>VIII 100<br>IX<br>X 140<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 2 | 39831246 | Օճառ հեղուկ 5լ | Ձեռքի հեղուկ օճառ 5լ: Մանրեազերծող, ախտահանող օճառ, հակաալերգիկ | հատ | 1600 | 19200 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 2<br>III<br>IV 4<br>V<br>VI<br>VII<br>VIII 3<br>IX<br>X 3<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 3 | 39831276 | Օճառ սանհանգույցի | > 30% անիոնային ՄԱՆ, 5-15% ոչ անիոնային ՄԱՆ, <5% ակտիվ քլոր պարունակող բաղադրիչ (սպիտակեցում), նատրիումի ցիտրատ, նատրիումի սուլֆատ, նատրիումի կարբոնատ, օծանելիք, ներկանյութ: 2*50գ 4 ը 1-ում | հավաք. | 850 | 68000 | 80 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 15<br>III 20<br>IV 25<br>V<br>VI<br>VII<br>VIII 20<br>IX<br>X<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 4 | 39831210 | Հեղուկ լվացող 500մլ | Սպասք լվացող հեղուկ 500մլ: Մածուցիկ հեղուկ ցանկացած տիպի հետքեր մաքրելու համար: | հատ | 520 | 18200 | 35 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 6<br>III 10<br>IV<br>V<br>VI<br>VII<br>VIII 10<br>IX<br>X 9<br>XI<br>XII | 30.12.20թ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 39831247 | Մաքրող միջոց 400գ /Comet/ | Մաքրող փոշի, սպիտակեցնող, ախտահանող, ժանգ հեռացնող միջոց, բաղադրությունը՝ անիոնային ՄԱՆ, քլորպարունակող սպիտակեցնող նյութեր, բուրանյութեր, դեզինֆեկտանտներ: Քաշը՝ 400գր : | հատ | 530 | 26500 | 50 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II: 10<br>III: 20<br>IV<br>V: 10<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X<br>XI: 10<br>XII | 30.12.20թ |
| 6 | 39831247 | Մաքրող միջոց 500մլ /Domestos/ | Սան հանգույցը մաքրող գել մանրէազերծող, սպիտակեցնող, ախտահանող, ժանգ հեռացնող միջոց 500մլ /Domestos/ | հատ | 760 | 45600 | 60 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II: 10<br>III<br>IV: 20<br>V<br>VI<br>VII<br>VIII: 15<br>IX<br>X: 15<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 7 | 39836000 | Ավել /երկ.85-90 սմ, լայն.35-40սմ/ | Հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում 350-500 գրամ, երկարությունը 85-90 սմ, ավլող մասի լայնքը 35-40սմ | հատ | 700 | 21000 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II: 5<br>III<br>IV: 10<br>V<br>VI<br>VII<br>VIII: 10<br>IX<br>X<br>XI: 5<br>XII | 30.12.20թ |
| 8 | 39831283 | Շոր հատակի 65x71սմ | Հատակ լվանալու շոր, 65x71սմ | հատ | 800 | 24000 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II: 5<br>III: 8<br>IV<br>V<br>VI<br>VII<br>VIII: 9<br>IX<br>X: 8<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 9 | 39831283 | Շոր հատակի 50x80սմ | Հատակ լվանալու շոր, 50x80սմ, միկրոֆիբրա | հատ | 1750 | 17500 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II: 3<br>III<br>IV: 4<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X<br>XI: 3<br>XII | 30.12.20թ |
| 10 | 39835000 | Հատակի խոզանակ գոգաթիակով | Խոզանակ գոգաթիակով պլասմասե | հավաք. | 1960 | 11760 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II: 2<br>III: 4<br>IV<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 11 | 39835000 | Փայտ հատակի 120սմ | Հատակ լվանալու փայտե միջոց, երկարությունը 120սմ | հատ | 800 | 4000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II: 2<br>III<br>IV<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X: 3<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 12 | 39831247 | Ժավել 1լ | Մաքրող, լվացող, սպիտակեցնող, աղտահանող, հեղուկ միջոց 1լ | լիտր | 210 | 8400 | 40 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II: 6<br>III<br>IV: 14<br>V<br>VI<br>VII<br>VIII: 10<br>IX<br>X: 10<br>XI<br>XII | 30.12.20թ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | 39811300 | Օդաթարմեցուցիչ 350մլ | Օդաթարմեցուցիչ 350մլ, 3-ը 1-ում: Բաղադրությունը բուտան, պրոպան, ջուր, էմուլգատոր, բուրանյութ: Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային [illegible] | հատ | 700 | 16800 | 24 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 8<br>III<br>IV<br>V 8<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 8<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 14 | 39831281 | Կտոր 40x60սմ /վաֆլե, ապակի մաքրող/ | Կտոր 40x60սմ /վաֆլե, ապակի մաքրող/ | հատ | 120 | 2400 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 4<br>III<br>IV 8<br>V<br>VI<br>VII<br>VIII 8<br>IX<br>X<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 15 | 39831282 | Լաթ /40սմX40սմ/ | Բամբակյա, 40սմX40սմ | հատ | 430 | 12900 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 4<br>III 8<br>IV<br>V 8<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 10<br>XI<br>XII | 30.12.20թ |
| | | **Ընդամենը** | | | | **421260** | | | | |
| | | | | **Կահավորանք** | | | | | | |
| 16 | 39221490 | Սպունգ | Սպունգ խոհանոցային պրոֆիլացված: Սպասք լվանալու միջոց վրան ամրացված հատուկ մաքրող բյուրեղներով շերտ | հատ | 240 | 24000 | 100 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 15<br>III<br>IV 30<br>V<br>VI<br>VII<br>VIII 30<br>IX<br>X 25<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 17 | 39221500 | Սպունգ մետաղական /3հատ/ | Պարուրակ սպասքի համար, չժանգոտող պողպատից, 3 հատ | հատ | 190 | 5510 | 29 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 5<br>III 8<br>IV<br>V 6<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 10<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 18 | 39221500 | Սպունգ բարձիկ /մետաղական/ | Բարձիկի երեսապատման հատվածն մետաղական թելիկներ | հատ | 100 | 4000 | 40 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 6<br>III<br>IV 10<br>V<br>VI<br>VII<br>VIII 14<br>IX<br>X<br>XI 10<br>XII | 30.12.20թ |
| 19 | 39224560 | Փայլաթիթեղ /հաստ. 15մկմ, լայն.30սմ, երկար. 15մ/ | Հաստ.15մկմ, լայն. 30սմ, երկար. 15մ | հատ | 660 | 6600 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 2<br>III 4<br>IV<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 4<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 20 | 39224380 | Կրակայրիչ | Գազով լիցքավորված այրիչ, բռնկումը՝ էլեկտրական, սնուցումը մարտկոցով | հատ | 420 | 10920 | 26 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 3<br>III<br>IV<br>V 13<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 10<br>XI<br>XII | 30.12.20թ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | 39224410 | Հեղուկ գազ 300 մլ | Պլաստմասսայից տարա, լցված հեղուկ գազով, կրակայրիչը լիցքավորելու համար, 300 մլ Անգույն, անհոտ, այրվող գազ է. | հատ | 430 | 12900 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 3<br>III<br>IV<br>V 15<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 12<br>XI<br>XII | 30.12.20 |
| 22 | 39221310 | Հարթակ պլամասե 22x13 սմ | Կտրատման տախտակ 22x13 սմ, | հատ | 1540 | 6160 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II<br>III 2<br>IV<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX 2<br>X<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 23 | 39221310 | Դանակ խոհարարական | Նյութը՝ չժանգոտվող պողպատ 5 խոհանոցային դանակ 1 խոհանոցային մկրատ, տակդիր: | հավաք | 8000 | 24000 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II<br>III<br>IV 2<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X<br>XI 1<br>XII | 30.12.20թ |
| 24 | 39221310 | Թասեր /4հատ/ | Չժանգոտվող պողպատից թասիկներ, պլաստմասսե կափարիչներով, տարբեր չափերի: | հավաք | 1170 | 4680 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II<br>III 3<br>IV<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 1<br>XI<br>XII | 30.12.20թ |
| | | Ընդամենը | | | | 98770 | | | | |
| | | Հատուկ հագուստ և պարագաներ | | | | | | | | |
| 25 | 18421140 | Ձեռնոց ռետինե | Ձեռնոց ռեզինե, նախատեսված ապակու, սանհանգույցի, բոլոր աշխատանքների մաքրման համար | զույգ | 160 | 9600 | 60 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 10<br>III 15<br>IV<br>V 25<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X<br>XI 10<br>XII | 30.12.20թ |
| | | Ընդամենը | | | | 9600 | | | | |
| | | Մասնագիտական հագուստ , պարագաներ | | | | | | | | |
| 26 | 18141100 | Ձեռնոց բանվորական | Ձեռնոց գործվածքից, ռեզինե պուտերով, նախատեսված ապակու, սանհանգույցի, բոլոր աշխատանքների մաքրման համար | զույգ | 160 | 4000 | 25 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 3<br>III<br>IV 12<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 10<br>XI<br>XII | 30.12.20թ |
| | | Ընդամենը | | | | 4000 | | | | |
| | | Առարկաներ կտորից | | | | | | | | |
| 27 | 39531500 | Գորգ հատակի նախամուտքի 45x75. 5x7մմ | Գորգ հատակի նախամուտքի 45x75. 5x7մմ | հատ | 1300 | 6500 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 1<br>III<br>IV 2<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 2<br>XI<br>XII | 30.12.20թ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 39514200 | Ծեփի սրբիչ 70սմ-30սմ | Բամբակյա, 70սմ-30սմ | հատ | 500 | 7500 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 3<br>III<br>IV<br>V 6<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 6<br>XI<br>XII | 30.12.20թ |
| | Ընդամենը | | | | | 14000 | | | | |
| | Անձնական խնամքի պարագաներ | | | | | | | | | |
| 29 | 33761300 | Սրբիչ զուգարանի 168X208մմ /երկշերտ 150հատ/ | Սրբիչ անձեռոցիկ, 168X208մմ, 150 հատ երկշերտ | փաթեթ | 700 | 49000 | 70 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 10<br>III<br>IV 20<br>V<br>VI<br>VII<br>VIII 20<br>IX<br>X 20<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 30 | 33761100 | Թուղթ հիգենիկ 150մ | Զուգարանի թուղթ 150մետր | հատ | 820 | 57400 | 70 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 10<br>III 25<br>IV<br>V 25<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X<br>XI 10<br>XII | 30.12.20թ |
| 31 | 33761100 | Թուղթ հիգենիկ 65մ | Զուգարանի թուղթ 65 մետր | տուփ | 130 | 78000 | 600 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 100<br>III<br>IV 180<br>V<br>VI<br>VII<br>VIII 160<br>IX<br>X 80<br>XI 80<br>XII | 30.12.20թ |
| 32 | 33761400 | Անձեռոցիկ /180հատ/ | Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 180 հատանոց տուփերով, փափուկ թղթից: | տուփ | 290 | 72500 | 250 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 40<br>III<br>IV<br>V 80<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 50<br>XI 80<br>XII | 30.12.20թ |
| | Ընդամենը | | | | | 256900 | | | | |
| | Պոլիէթիլենային տոպրակներ, պարկ | | | | | | | | | |
| 33 | 19642000 | Սննդի պոլիէթիլեն 25մ | Սննդի պոլիէթիլեն ըստ ԳՕՍՏ 10354-82 | հատ | 350 | 2100 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II<br>III 3<br>IV<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X 3<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 34 | 19641000 | Պարկ աղբի /35լ 50հատ/ | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք: /35լ, 50հատ/ | հատ | 560 | 56000 | 100 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 15<br>III<br>IV 30<br>V<br>VI<br>VII<br>VIII 25<br>IX<br>X 30<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 35 | 19641000 | Պարկ աղբի /120լ, 10հատ/ | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 | հատ | 930 | 27900 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II 4<br>III 10<br>IV<br>V<br>VI<br>VII<br>VIII 10<br>IX<br>X<br>XI 6<br>XII | 30.12.20թ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 36 | 19640000 | Տոպրակ պոլիէթիլենային 8*12սմ ZIP | Տոպրակ պոլիէթիլենային 8*12սմ ZIP ըստ ԳՕՍՏ 10354-82 | հատ | 30 | 4800 | 160 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II – 20<br>III<br>IV – 60<br>V<br>VI<br>VII<br>VIII – 60<br>IX<br>X – 20<br>XI<br>XII | 30.12.2 |
| | | Ընդամենը | | | | 90800 | | | | |
| Ձեռքի աշխատանքներ և կերպարվեստի նյութեր | | | | | | | | | | |
| 37 | 37821190 | Ցուղաթուղթ | Խմորային պատրաստումների տակ փռվող թուղթ: Ցուղաթուղթ 5մ*29 սմ | հատ | 560 | 1680 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II – 1<br>III<br>IV<br>V<br>VI<br>VII<br>VIII – 2<br>IX<br>X<br>XI<br>XII | 30.12.20թ |
| | | Ընդամենը | | | | 1680 | | | | |
| Դեղագործական արտադրանք | | | | | | | | | | |
| 38 | 33691846 | Կիտրոնաթթու 30գր | Սպիտակ բյուրեղային նյութ, օգտագործվում է ոսկերչական իրերի լվացման համար, քաշը՝ 30գ | փաթեթ | 100 | 6000 | 60 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II – 6<br>III<br>IV – 30<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX – 24<br>X<br>XI<br>XII | 30.12.20թ |
| | | Ընդամենը | | | | 6000 | | | | |
| Համեմունքներ և ամոքանքներ | | | | | | | | | | |
| 39 | 15871200 | Քացախ 12% 0,5լ | 12%-անոց քացախի լուծույթ | հատ | 180 | 720 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II – 1<br>III<br>IV – 3<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X<br>XI<br>XII | 30.12.20թ |
| 40 | 15872600 | Սոդա /500գր/ | Նատրիումի կարբոնատ տուփի մեջ 500գ | տուփ | 200 | 1200 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | II – 2<br>III<br>IV – 2<br>V<br>VI<br>VII<br>VIII<br>IX<br>X – 2<br>XI<br>XII | 30.12.20թ |
| | | Ընդամենը | | | | 1920 | | | | |

Մատակարարման ժամկետը. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո ժամանակացույցով նշված ամիսների համար մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը:

Ապրանքի քանակի և մատակարարման ժամկետի, փոփոխում կարող է կատարվել, Պատվիրատուի կողմից նման առաջարկ ստանալու դեպքում:

**ԳՆՈՐԴ**

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2

ՀՎՀՀ 05536355

Հ/Հ 9002180005872950

Գյումրիի գանձապետական բաժանմունք

---------------------------------------

ստորագրություն)

Տնօրեն՝ Ք. Ահարոնյան

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

Ա/Ձ Համլետ Ավետիսյան

ք. Գյումրի Գոգոլի 70

ՀՎՀՀ 57262622

Հ/Հ 220060813718000

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

---------------------------------------

ստորագրություն)

Տնօրեն՝ Հ.Ավետիսյան

Կ.Տ.

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև նախագիծը մատակարարին ուղարկելը:*

Հավելված N 2
« 13» փետրվարի 2020 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 05/20 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| համարը | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | հունվար | Փետրվար մարտ | Մարտ մայիս | Ապրիլ հունիս | Մայիս հուլիս | Հունիս օգոստոս | հուլիս սեպտեմբեր | օգոստոս հոկտեմբեր | Սեպտեմբեր նոյեմբեր | Հոկտեմբեր դեկտեմբեր | Նոյեմբեր դեկտեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1-15 | **39800000** | **Մաքրող և փայլեցնող արտադրանք** | | 84300 | 134780 | 235530 | 249870 | 249870 | 249870 | 330530 | 330530 | 407210 | 421260 | 421260 | 421260 |
| 16-24 | **39200000** | **Կահավորանք** | | 9020 | 19770 | 43970 | 57020 | 57020 | 57020 | 65620 | 68700 | 89770 | 98770 | 98770 | 98770 |
| 25 | **18421140** | **Հատուկ հագուստ և պարագաներ** | | 1600 | 4000 | 4000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 9600 | 9600 | 9600 |
| 26 | **18141100** | **Մասնագիտական հագուստ , պարագաներ** | | 480 | 480 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 27-28 | **39500000** | **Առարկաներ կտորից** | | 2800 | 2800 | 5400 | 8400 | 8400 | 8400 | 8400 | 8400 | 14000 | 14000 | 14000 | 14000 |
| 29-32 | **33700000** | **Անձնական խնամքի պարագաներ** | | 39800 | 60300 | 97700 | 141400 | 141400 | 141400 | 176200 | 176200 | 215100 | 256900 | 256900 | 256900 |
| 33-36 | 19642000 | **Պոլիէթիլենային տոպրակներ, պարկ** | | 12720 | 23070 | 41670 | 41670 | 41670 | 41670 | 66770 | 66770 | 85220 | 90800 | 90800 | 90800 |
| 37 | 37821190 | **Ձեռքի աշխատանքներ և կերպարվեստի նյութեր** | | 560 | 560 | 560 | 560 | 560 | 560 | 560 | 1680 | 1680 | 1680 | 1680 | 1680 |
| 38 | 33600000 | **Դեղագործական արտադրանք** | | 600 | 600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 39-40 | 15870000 | **Համեմունքներ և ամոքանքներ** | | 580 | 580 | 1520 | 1520 | 1520 | 1520 | 1520 | 1520 | 1920 | 1920 | 1920 | 1920 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 900218000587295
Գյումրու գանձապետական բաժանմունք

_______________
(ստորագրություն)
Տնօրեն Ք. Աhարոնյան
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

Համլետ Ավետիսյան Ա/Ձ
ք. Գյումրի Գոգոլի 70
ՀՎՀՀ 57262622
Հ/Հ 220060813718000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

_______________
(ստորագրություն)
Տնօրեն Հ. Ավետիսյան
Կ.Տ

*Հավելված N 3*
*«13» փետրվարի 2020 թ. կնքված*
*ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 05/20 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
Ա/ՁՀամլետԱվետիսյան
ք. Գյումրի Գոգոլի 70
հհ220060813718000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ»ՓԲԸ
հվհհ57262622
տնօրեն
______________Հ. Ավետիսյան

Պատվիրատու
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5-2
հհ9002180005872950
Գյումրիիգանձապետականբաժանմունք
Հվհհ05536355
Տնօրեն
______________Ք. Աhարոնյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«14»«փետրվարի» 2020թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր**
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «13» «փետրվարի» 2020թ.
Պայմանագրիհամարը՝ ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 05/20
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելով «14» «փետրվարի»2020թ. դուրս գրված N Բ6915156106 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատակարարելէհետևյալապրանքները՝

| N | Մատակարարվածապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1. | Օճառ TEO 100գ | Ձեռքի օճառ «Սովորական» տեսակի, հակաբակտերիալ ազդեցությամբ: Որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100գ կտորի անվանական զանգվածի համար)՝ ոչ պակաս 74 գ, սողալանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ $Na_2O$) մասը՝ ոչ ավելի 0,22%-ից, Փրփուրի նախնական ծավալը՝ ոչ պակաս 320սմ$^3$, Նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ ոչ ավել 0,4%-ից, Օճառից անջատված ճարպաթթուների սառեցման ջերմաստիճանը /տիտրը/ 36-41°C, Անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24 ի թիվ 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III 8.2 | 100 | 100 | 29.02.2020թ | 14.02.2020 | 25,00 | 30.04.20 |

27/02/2020

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը | | | | | | |
| 2. | Օճառ հեղուկ 5լ merta | Ձեռքի հեղուկ օճառ 5լ: Մանրեազերծող, ախտահանող օճառ, հանկայնոգին | 2 | 2 | 29.02.2020թ | 14.02.2020 | 3,20 | 30.04.20 |
| 3. | Օճառ սանհանգույցի bref | > 30% անիոնային ՄԱՆ, 5-15% ոչ անիոնային ՄԱՆ, <5% ակտիվ քլոր պարունակող բաղադրիչ (սպիտակեցում), նատրիումի ցիտրատ, նատրիումի սուլֆատ, նատրիումի կարբոնատ, օծանելիք, ներկանյութ: 2*50գ 4-ը 1-ում | 15 | 15 | 29.02.2020թ | 14.02.2020 | 12,75 | 30.04.20 |
| 4. | Սպունգ Vileda | Սպունգ խոհանոցային պրոֆիլացված: Սպասք լվանալու միջոց վրան ամրացված հատուկ մաքրող բյուրեղներով շերտ | 15 | 15 | 29.02.2020թ | 14.02.2020 | 3,60 | 30.04.20 |
| 5. | Սպունգ մետաղական /3հատ/ | Պարուրակ սպասքի համար, չժանգոտող պողպատից, 3 հատ | 5 | 5 | 29.02.2020թ | 14.02.2020 | 0,95 | 30.04.20 |
| 6. | Սպունգ բարձիկ /մետաղական/ | Բարձիկի երեսապատման հատված մետաղական թելիկներ | 6 | 6 | 29.02.2020թ | 14.02.2020 | 0,60 | 30.04.20 |
| 7. | Հեղուկ լվացող 500մլ Feri | Սպասք լվացող հեղուկ 500մլ: Մածուցիկ հեղուկ ցանկացած տիպի հետքեր մաքրելու համար: | 6 | 6 | 29.02.2020թ | 14.02.2020 | 3,12 | 30.04.20 |
| 8. | Մաքրող միջոց 400գ /Comet/ | Մաքրող փոշի,սպիտակեցնող, ախտահանող, ժանգ հեռացնող միջոց, բաղադրությունը՝ անիոնային ՄԱՆ, քլորպարունակող սպիտակեցնող նյութեր, բուրանյութեր, դեզինֆեկատներ: Քաշը՝ 400գր | 10 | 10 | 29.02.2020թ | 14.02.2020 | 5,30 | 30.04.20 |
| 9. | Մաքրող միջոց 500մլ /Domestos/ | Սան հանգույցը մաքրող գել մանրէազերծող, սպիտակեցնող, ախտահանող, ժանգ հեռացնող միջոց 500մլ | 10 | 10 | 29.02.2020թ | 14.02.2020 | 7,60 | 30.04.20 |
| 10. | Ձեռնոց ռետինե | Ձեռնոց ռեզինե, նախատեսված ապակու, սանհանգույցի, բոլոր աշխատանքների մաքրման համար | 10 | 10 | 29.02.2020թ | 14.02.2020 | 1,60 | 30.04.20 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11. | Ձեռնոց բանվորակա ն | Ձեռնոց գործվածքից, ռեզինե պուտերով, նախատեսված ապակու, սանհանգույցի, բոլոր աշխատանքների մաքրման համար | 3 | 3 | 29.02.2020թ | 14.02.2020 | 0,48 | 30.04.20 |
| 12. | Ավել /երկ.85-90 սմ, լայն.35-40սմ/ | Հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում 350-500 գրամ, երկարությունը 85-90 սմ, ավլող մասի լայնքը 35-40սմ | 5 | 5 | 29.02.2020թ | 14.02.2020 | 3,50 | 30.04.20 |
| 13. | Շոր հատակի 65x71սմ | Հատակ լվանալու շոր, 65x71սմ | 5 | 5 | 29.02.2020թ | 14.02.2020 | 4,00 | 30.04.20 |
| 14. | Շոր հատակի 50x80սմ Parex | Հատակ լվանալու շոր, 50x80սմ, միկրոֆիբրա | 3 | 3 | 29.02.2020թ | 14.02.2020 | 5,25 | 30.04.20 |
| 15. | Հատակի խոզանակ գոգաթիակո վ | Խոզանակ գոգաթիակով պլասմասե | 2 | 2 | 29.02.2020թ | 14.02.2020 | 3,92 | 30.04.20 |
| 16. | Գորգ հատակի նախա մուտքի 45x75. 5x7մմ | Գորգ նախամուտքի /45x75.5x7մմ/ | 1 | 1 | 29.02.2020թ | 14.02.2020 | 1,30 | 30.04.20 |
| 17. | Փայտ հատակի 120սմ | Հատակ լվանալու փայտե միջոց, երկարությունը 120սմ | 2 | 2 | 29.02.2020թ | 14.02.2020 | 1,60 | 30.04.20 |
| 18. | Ժավել 1լ Белизна | Մաքրող, լվացող, սպիտակեցնող, աղտահանող, հեղուկ միջոց 1լ | 6 | 6 | 29.02.2020թ | 14.02.2020 | 1,26 | 30.04.20 |
| 19. | Օդաթարմեցուցիչ 350մլ flamingo | Օդաթարմեցուցիչ 350մլ, 3-ը 1-ում: Բաղադրությունը բուտան, պրոպան, ջուր, էմուլգատոր, բուրանյութ: Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային բալոնիկով: | 8 | 8 | 29.02.2020թ | 14.02.2020 | 5,60 | 30.04.20 |
| 20. | Կտոր 40x60սմ /վաֆլե, ապակի մաքրող/ | Կտոր 40x60սմ /վաֆլե, ապակի մաքրող/ | 4 | 4 | 29.02.2020թ | 14.02.2020 | 0,48 | 30.04.20 |
| 21. | Սրբիչ զուգարանի 168X208մմ /երկշերտ 150հատ/ | Սրբիչ անձեռոցիկ, 168X208մմ, 150 հատ երկշերտ | 10 | 10 | 29.02.2020թ | 14.02.2020 | 7,00 | 30.04.20 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 22. | Թուղթ հիգենիկ 150մ | Զուգարանի թուղթ 150մետր | 10 | 10 | 29.02.2020թ | 14.02.2020 | 8,20 | 30.04.20 |
| 23. | Թուղթ հիգենիկ 65մ | Զուգարանի թուղթ 65 մետր | 100 | 100 | 29.02.2020թ | 14.02.2020 | 13,00 | 30.04.20 |
| 24. | Լաթ /40սմX40սմ/ | Բամբակյա, 40սմX40սմ | 4 | 4 | 29.02.2020թ | 14.02.2020 | 1,72 | 30.04.20 |
| 25. | Անձեռոցիկ /180հատ/ zara | Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 180 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ հոկտեմբերի 19 ի N 1546 Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" | 40 | 40 | 29.02.2020թ | 14.02.2020 | 11,60 | 30.04.20 |
| 26. | Պարկ աղբի /35լ, 50հատ/ parex | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82: /35լ, 50հատ/ | 15 | 15 | 29.02.2020թ | 14.02.2020 | 8,40 | 30.04.20 |
| 27. | Պարկ աղբի /120լ, 10հատ/ parex | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82: /120լ, 10հատ/ | 4 | 4 | 29.02.2020թ | 14.02.2020 | 3,72 | 30.04.20 |
| 28. | Տոպրակ պոլիէթիլենային 8*12սմ ZIP | Տոպրակ պոլիէթիլենային 8*12սմ ZIP ըստ ԳՕՍՏ 10354-82 | 20 | 20 | 29.02.2020թ | 14.02.2020 | 0,60 | 30.04.20 |
| 29. | Փայլաթիթեղ /հաստ. 15մկմ, լայն.30սմ, երկար. 15մ/ | Հաստ.15մկմ, լայն. 30սմ, երկար. 15մ | 2 | 2 | 29.02.2020թ | 14.02.2020 | 1,32 | 30.04.20 |
| 30. | Կրակայրիչ | Գազով լիցքավորված այրիչ, բռնկումը՝ էլեկտրական, անուցումը մարտկոցով | 3 | 3 | 29.02.2020թ | 14.02.2020 | 1,26 | 30.04.20 |
| 31. | Հեղուկ գազ 300 մլ | Պլաստմասսայից տարա, լցված հեղուկ գազով, կրակայրիչը լիցքավորելու համար, 300 մլ Անգույն, անհոտ, այրվող գազ է, հալման ջերմաստիճանը՝ 187, 7°C, եռմանը՝ 42, 1° C: Պարունակվում է բնական և նավթային գազերում | 3 | 3 | 29.02.2020թ | 14.02.2020 | 1,29 | 30.04.20 |
| 32. | Թեյի սրբիչ 70սմ-30սմ | Բամբակյա, 70սմ-30սմ | 3 | 3 | 29.02.2020թ | 14.02.2020 | 1,50 | 30.04.20 |
| 33. | Յուղաթուղթ stella | Խմորային պատրաստուկների տակ փռվող թուղթ: Յուղաթուղթ 5մ*29 սմ | 1 | 1 | 29.02.2020թ | 14.02.2020 | 0,56 | 30.04.20 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Քացախ 12% | 12%-անոց քացախի լուծույթ | 1 | 1 | 29.02.2020թ | 14.02.2020 | 0,18 | 30.04.20 |
| 35. | Սոդա /500գր/ | Նատրիումի կարբոնատ տուփի մեջ 500գ | 2 | 2 | 29.02.2020թ | 14.02.2020 | 0,40 | 30.04.20 |
| 36. | Կիտրոնա թթու 30գր | Սպիտակ բյուրեղային նյութ, օգտագործվում է ոսկերչական իրերի լվացման համար, քաշը՝ 30գ | 6 | 6 | 29.02.2020թ | 14.02.2020 | 0,60 | 30.04.20 |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

Հ. Ավետիսյան

պաշտոնը, անունը

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

պաշտոնը, անունը

Կ.Տ.

# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 14 | Փետրվար | 2020 թ. | Բ | 6915156106 |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | | | |
| 14 | Փետրվար | 2020 թ. | | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ

| | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | |

**[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**

**[7.1] ՀԴՄ կտրոնի համար**

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | |
|---|---|
| **[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)** | 5 7 2 6 2 6 2 2 |
| **[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը** | |
| **[10] Անվանումը** | ՀԱՄԼԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ) |
| **[11] Բանկային տվյալները** | ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԵԿՈԼ ԲԱՆԿ — N 220060813718000 |
| **[12] Գտնվելու վայրը (հասցեն)** | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ Գոգոլի 70 |
| **[13] Վայրը, որտեղից ապրանքներն առաքվում են** | Գյումրի Ա.Մանուկյան 13 |
| **[14] Լրացուցիչ տվյալներ** | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| **[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)** | 0 5 5 3 6 3 5 5 |
| **[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը** | |
| **[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)** | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| **[18] Բանկային տվյալները** | Գյումրու գանձապետական բաժանմունք — N 9002180005872950 |
| **[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)** | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ Անի թաղ. 11փ. 5 2 |
| **[20] Լրացուցիչ տվյալներ** | |
| **[21] Ում միջոցով** — **Անուն, ազգանուն** | |
| **Լիազորագիր** — **Համար** | |
| **Լիազորագիր** — **Ամսաթիվ** | |
| **[22] Մատակարարման (առաքման) եղանակը** | |
| **[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)** | ԳՅՈՒՄՐԻ Անի Թաղ. 11 Փող. 5 / 2 |

**[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը**

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Օճառ TEO 100գ | հատ | 100 | 250 | | 25000 | | |
| 2 | Օճառ հեղուկ 5լ merta | հատ | 2 | 1600 | | 3200 | | |
| 3 | Օճառ սանհանգույցի bref | հավաք | 15 | 850 | | 12750 | | |
| 4 | Սպունգ Vileda | հատ | 15 | 240 | | 3600 | | |
| 5 | Սպունգ մետաղական /3հատ/ | հավաք | 5 | 190 | | 950 | | |
| 6 | Սպունգ բարձիկ /մետաղական/ | հատ | 6 | 100 | | 600 | | |
| 7 | Հեղուկ լվացող 500մլ Feri | հատ | 6 | 520 | | 3120 | | |
| 8 | Մաքրող միջոց 400գ /Comet/ | հատ | 10 | 530 | | 5300 | | |
| 9 | Մաքրող միջոց 500մլ /Domestos/ | հատ | 10 | 760 | | 7600 | | |
| 10 | Ձեռնոց ռետինե | զույգ | 10 | 160 | | 1600 | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | Ձեռնոց բանվորական | զույգ | 3 | 160 | | 480 | | |
| 12 | Ավել /երկ.85-90 սմ, լայն.35-40սմ/ | հատ | 5 | 700 | | 3500 | | |
| 13 | Շոր հատակի 65x71սմ | հատ | 5 | 800 | | 4000 | | |
| 14 | Շոր հատակի 50x80սմ Parex | հատ | 3 | 1750 | | 5250 | | |
| 15 | Հատակի խոզանակ գոգաթիակով | հավաք | 2 | 1960 | | 3920 | | |
| 16 | Գորգ հատակի նախամուտքի 45x75. 5x7մմ " | հատ | 1 | 1300 | | 1300 | | |
| 17 | Փայտ հատակի 120սմ | հատ | 2 | 800 | | 1600 | | |
| 18 | Ժավել 1լ Белизна | հատ | 6 | 210 | | 1260 | | |
| 19 | Օդաթարմեցուցիչ 350մլ flamingo | հատ | 8 | 700 | | 5600 | | |
| 20 | Կտոր 40x60սմ /վաֆլե, ապակի մաքրող/ | հատ | 4 | 120 | | 480 | | |
| 21 | Սրբիչ զուգարանի 168X208մմ /երկշերտ 150հատ/ | հատ | 10 | 700 | | 7000 | | |
| 22 | Թուղթ հիգենիկ 150մ | հատ | 10 | 820 | | 8200 | | |
| 23 | Թուղթ հիգենիկ 65մ | հատ | 100 | 130 | | 13000 | | |
| 24 | Լաթ /40սմX40սմ/ | հատ | 4 | 430 | | 1720 | | |
| 25 | Անձեռոցիկ /180հատ/ zara | տուփ | 40 | 290 | | 11600 | | |
| 26 | Պարկ աղբի /35լ, 50հատ/ parex | հատ | 15 | 560 | | 8400 | | |
| 27 | Պարկ աղբի /120լ, 10հատ/ parex | հատ | 4 | 930 | | 3720 | | |
| 28 | Տոպրակ պոլիէթիլենային 8*12սմ ZIP | հատ | 20 | 30 | | 600 | | |
| 29 | Փայլաթիթեղ /հաստ. 15մկմ, լայն.30սմ, երկար. 15մ/ | հատ | 2 | 660 | | 1320 | | |
| 30 | Կրակայրիչ | հատ | 3 | 420 | | 1260 | | |
| 31 | Հեղուկ գազ 300 մլ | հատ | 3 | 430 | | 1290 | | |
| 32 | Թեյի սրբիչ 70սմ-30սմ | հատ | 3 | 500 | | 1500 | | |
| 33 | Յուղաթուղթ stella | հատ | 1 | 560 | | 560 | | |
| 34 | Քացախ 12% | հատ | 1 | 180 | | 180 | | |
| 35 | Սոդա /500գր/ | հատ | 2 | 200 | | 400 | | |
| 36 | Կիտրոնաթթու 30գր | փաթեթ | 6 | 100 | | 600 | | |
| **Ընդամենը** | | | | | | 152460 | | |

Առաքող՝ NAHAPETYAN ARTAK 4012770063
(անունը, ազգանունը)

Ստացող AHARONYAN KNARIK 5708640316
(անունը, ազգանունը)

14/02/2020 10:59:17

14/02/2020 14:17:25